ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 2, 1963 Общественные науки

Ա. Մ. Հակոբյան

ՍՍՌՄ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Դեկտեմբերի վերջին լրացավ մեր բազմազգ Սովետական պետության՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ստեղծման 40 տարին։ Հանդիսանալով կոմունիստական հասարակության կառուցման ճանապարհին մեր մեծ Հայրենիքի բազմամիլիոն և բազմազգ ժողովուրդների պետական համագործակցության, նրանց բոլոր ուժերի միավորման ամենափայլուն օրինակը, Սովետական Միությունը իր գոյության 40 տարիների ընթացքում անցել է փառավոր ուղի։

Մարքսիզմ-լենինիզմի գաղափարների կենսագործման շնորհիվ, նախկինում հետամնաց մեր երկիրը գարձել է սոցիալիստական արդյունաբերության և գյուղատնտեսության հզոր երկիր, ամենաառաջավոր և զարգացած գիտության երկիր, հասել է սոցիալիզմին և ներկայումս ձեռնամուխ եղել կոմունիզմի ծավալուն շինարարությանը։ Ինչպես նշված է Կոմունիստական պարտիայի նոր Ծրագրում, «կոմունիստական հասարակարգի կառուցումը դարձել է սովետական ժողովրդի անմիջական գործնական խնդիրը»[1]։

Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ մեր սովետական պետությունը, նրա հերոս ժողովուրդը սոցիալիզմի իրականացմանը հասել են բազմապիսի ներքին ու արտաքին դժվարությունների հաղթահարման ճանապարհով։ Միայն մեր բազմազգ սոցիալիստական պետությունը կարող էր և ջախջախեց այնպիսի ուժեղ ու նենգ թշնամու, ինչպիսին էր գերմանական ֆաշիզմը։ Պատմական այդ մեծագույն խնդրի կատարման հետ միասին, Սովետական Միությունը անշահախնդիր եղբայրական օգնության ձեռք մեկնեց Եվրոպայի և Ասիայի մի շարք ժողովուրդների, որոնք կանգնեցին սոցիալիստական զարգացման մայրուղու վրա։ Եվ եթե 40 տարի առաջ միայն մեր բազմազգ սոցիալիստական պետությունն էր կանգնած իմպերիալիստական ռեակցիայի դեմ, ապա ներկայումս մեծ չափով աճել է սոցիալիստական երկրների թիվը, ստեղծվել է սոցիալիստական հզոր լագեր։

* * *

Համառոտակի կանգ առնենք մեր բազմազգ պետության՝ Սովետական Միության ստեղծման և զարգացման հիմնական հարցերի վրա։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո, որը արմատատես լուծեց նաև ազգային հարցը, Կոմունիստական պարտիայի առջև հրամայական խնդիր դրվեց՝ սոցիալիզմի կառուցումը ապահովելու հա-

* Զեկուցվել է ՍՍՌՄ-ի կազմակերպման 40-ամյակին նվիրված գիտական նիստում 1962 թ. դեկտեմբերի 18-ին։

[1] Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը, Հայպետհրատ, Երևան, 1961, էջ 74։

մար համախմբել մեր լայնածավալ երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների ուժերը, նախապատրաստել և կազմակերպել նրանց պետական միությունը։ Իրա համար պատմության մեջ դեռևս չկար որևէ փորձ, որևէ օրինակ։ Ինչպես սոցիալիզմի կառուցման, նույնպես և սովետեն, իրավահավասարության վրա հիմնված բազմազգ սոցիալիստական պետության ստեղծման համար առաջինը ուղի պետք է հարթեր մեր երկիրը։ Ըստ որում, այդ դժվարագույն հարցի լուծումը պահանջում էր բազմակողմանիորեն հաշվի առնել մեր երկրի քաղաքական ու տնտեսական զարգացման առանձնահատկությունները, այնտեղ ապրող ազգերի ու ժողովուրդների, բոլոր սովետական ռեսպուբլիկաների կենսական շահերը։ Անհրաժեշտ էր, ելնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից, հստակ կերպով մշակել նոր ստեղծվելիք բազմազգ սոցիալիստական պետության սկզբունքները, նրա կոնկրետ խնդիրները։

Ինչպես հայտնի է, գիտական կոմունիզմի հիմնադիրներ Կարլ Մարքսը և Ֆրիդրիխ Էնգելսը մինչմոնոպոլիստական կապիտալիզմի դարաշրջանում, ուսումնասիրելով և խորը վերլուծության ենթարկելով ազգային շարժումները մի շարք երկրներում, հասարակական մտքի զարգացման պատմության մեջ առաջինները տվեցին ազգային-գաղութային հարցի լուծման հիմնական մեկնակետային դաղափարները, այդ հարցի տեղը և նշանակությունը պրոլետարիատի դասակարգային պայքարում։

Ազգային հարցը նրանք ներտորեն շաղկապեցին շահագործողների տիրապետության դեմ ուղղված պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի հետ՝ ցույց տալով այդ պայքարի ինտերնացիոնալ բնույթը։ Բացահայտելով ամենառևոլյուցիոն դասակարգի՝ պրոլետարիատի պատմական դերը՝ որպես կապիտալիզմի գերեզմանափորի, նրանք հանճարեղ կերպով ցույց տվեցին, որ միայն կապիտալիստական կարգերի տապալմամբ և պրոլետարիատի իշխանության հաստատմամբ հնարավոր է լիկվիդացնել ազգային ճնշումը, ազգերի հակամարտությունը և մեկուսացումը։

Մարքսը և Էնգելսը բանվոր դասակարգի ռևոլյուցիոն պայքարի առաջին պլանի վրա քաշեցին ինտերնացիոնալիզմի և սոցիալիզմի արմատական սկզբունքը չի կարող ազատ լինել այն ժողովուրդը, որը ճնշում է ուրիշ ժողովուրդների։ Նրանք ուրվագծեցին ժողովուրդների եղբայրական համագործակցության և իրավահավասարության ուղիները, ընդգծելով, որ դրան կարելի է հասնել միայն բոլոր ազգերի ու ժողովուրդների ընդհանուր շահերի միավորմամբ։

Նոր պայմաններում, իմպերիալիզմի և պրոլետարական ռևոլյուցիաների դարաշրջանում, ինչպես մարքսիզմի բոլոր հիմնական հարցերը, նույնպես և ազգային հարցը, որի տրամաբանական զարգացումն է բազմազգ սոցիալիստական պետության ստեղծումը, մշակեց ու ավելի բարձր աստիճանի հասցրեց Վ. Ի. Լենինը։ Նա հանճարեղ կերպով մշակեց Կոմունիստական պարտիայի թեորիան և ծրագիրը ազգային հարցի վերաբերյալ։ Այդ ծրագիրը ելնում է նրանից, որ անհրաժեշտ է վճռականորեն և լիովին ոչնչացնել ամեն տեսակի ազգային և ռասայական ճնշում, ազգերի մեջ հաստատել իրավահավասարություն, իրականացնել ազգերի ինքնորոշումը՝ ընդհուպ մինչև պետականորեն անջատումը և ինքնուրույն ազգային պետություն կազմելը։

Լենինյան այդ գաղափարների իրականացման կոնկրետ արտահայտություններից մեկը հանդիսացավ «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների

դեկլարացիան», որը հրապարակվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից մեկ շաբաթ հետո։ Այդ պատմական փաստաթղթում ասված է, որ Ժողովրդական Կոմիսարների Սովետը ազգային հարցում իր գործունեության հիմքում դնում է հետևյալ սկզբունքները.

«1. Ռուսաստանի ժողովուրդների հավասարությունն ու սուվերենությունը.

2. Ռուսաստանի ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անջատումն ու ինքնուրույն պետություն կազմելը.

3. Բոլոր և ամեն տեսակի ազգային ու ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը.

4. Ռուսաստանի տերիտորիայում բնակվող ազգային փոքրամասնությունների և ազգային խմբերի ազատ զարգացումը»[4]։

Ամբողջությամբ համապատասխանելով Ռուսաստանի՝ անցյալում ճնշված ժողովուրդների շահերին, այդ Դեկլարացիան նրանց առջև բաց արեց Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի մեծությունը, գործնականում հաստատեց, որ ժողովուրդների ճնշումը հնարավոր չէ լիկվիդացնել առանց շահագործող դասակարգերի տապալման, առանց պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման։

Ազատագրվելով կապիտալիստական շահագործումից և ձեռնամուխ լինելով սոցիալիստական հասարակարգի կառուցմանը, սովետական ժողովուրդը դեմ առ դեմ կանգնեց նոր դժվարությունների առջև։ Երկարատև պատերազմների հետևանքով ծայրահեղ կերպով քայքայվել էր երկրի տնտեսությունը։ Անջատ-անջատ ազգային սովետական ռեսպուբլիկաները անկարող էին իրենց սեփական ուժերով հաղթահարել քայքայված երկրի տնտեսական դժվարությունները։ Օգտագործելով այդ դժվարությունները, պրոլետարիատի դիկտատուրայի ներքին և արտաքին թշնամիները ակտիվ պայքար էին ծավալում նրա դեմ, որի հետևանքով ահավոր վտանգի առջև էր կանգնել պրոլետարիատի դիկտատուրան։ Անհրաժեշտ էր միավորել սովետական ռեսպուբլիկաների տնտեսական, քաղաքական, դիվանագիտական ու ռազմական բոլոր ուժերն ու հնարավորությունները, անհրաժեշտ էր նրանց միջև հաստատել ամուր պետական համագործակցություն, որի օրինակը հանդիսացավ 1918 թ. հունվարին ստեղծված Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկան։

Սովետական ազգային ավտոնոմ ռեսպուբլիկաների և մարզերի, նրանց աշխատավորների ամուր կապերի վրա հենված Ռուսաստանի սովետական ֆեդերացիան 1918—1920 թթ. քաղաքացիական կռիվների տարիներին ոչ միայն կարողացավ դիմանալ ներքին և արտաքին թշնամիների ահեղ գրոհներին, այլև գլխովին ջախջախեց դրանք և անշահախնդիր եղբայրական օգնության ձեռք մեկնեց իրենց ազատագրության համար պայքարի դուրս եկած Ուկրաինայի, Բելոռուսիայի, Անդրկովկասի, Միջին Ասիայի և մեր երկրի այլ ժողովուրդներին։ Պայքարելով պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր թշնամիների դեմ, այդ ժողովուրդները իրենց հերթին եղբայրական մեծ օգնություն ցույց տվեցին Սովետական Ռուսաստանին։

Ռուսաստանյան ֆեդերացիայի փորձը կարևոր նշանակություն ունեցավ

---

[4] Образование СССР, 1917—1924 г., М.—Л., 1949, стр. 20.

մեր երկրի ժողովուրդների պետական համագործակցության հետագա ուղիների որոշման գործում։ Ահա թե ինչու ՍՄԿՊ VIII համագումարում (1919 թ.) ընդունված պարտիայի ծրագրում ասված է. «...որպես անցման ձևերից մեկը դեպի լիակատար միասնություն տանող ուղու վրա, պարտիան առաջադրում է սովետական տիպով կազմակերպված պետությունների ֆեդերատիվ միավորումը»[3]։

Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման, նրա պաշտպանության ու ամրապնդման համար մղած այդ պայքարումն էլ կոփվեց սովետական բազմազգ և բազմամիլիոն ժողովուրդների, սովետական բոլոր ազգային ռեսպուբլիկաների ռազմական, դիվանագիտական, քաղաքական ու տնտեսական դաշինքը, որը կարևոր և անհրաժեշտ էտապ հանդիսացավ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության ստեղծման ճանապարհին։

1918—1921 թվականների ընթացքում սովետական ազգային ռեսպուբլիկաների միջև հաստատված դաշնակցային կապերը զարգանալով ու ամրապնդվելով, վեր են ածվում համաժողովրդական շարժման՝ հանուն այդ ռեսպուբլիկաների պետական միավորման— Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպման։

Այդ համաժողովրդական շարժման առաջին փուլն ընդգրկում է 1918—1921 թվականները, երբ ներքին հակասովետական ուժերի և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող պայքարում հաստատվեց սովետական ռեսպուբլիկաների ռազմա-քաղաքական դաշինքը, որով ապահովվեց թշնամու ջախջախումն ու Սովետական իշխանության հաղթական երթը։ Այդ դաշինքն իր կոնկրետ արտահայտությունը գտավ նրանում, որ տեղի ունեցավ սովետական ռեսպուբլիկաների ռազմական ուժերի միավորում։ Ըստ որում, այդ միավորման ընթացքում Սովետական Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը ստացավ մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների ամենաջերմ ու ամենագործոն աջակցությունը, թշնամու թիկունքում լայն ծավալ ստացավ պարտիզանական շարժումը և սովետական ռեսպուբլիկաների միջև հաստատվեց ամուր ռազմական համագործակցություն։ Կոմունիստական պարտիայի և սովետական կառավարության պաշտպանական միջոցառումները արժանացան սովետական բոլոր ժողովուրդների ընդհանուր հավանությանը։ «Սոցիալիստական Հայրենիքը վտանգի մեջ է» պարտիայի կոչին բոլոր սովետական ռեսպուբլիկաների աշխատավորները պատասխանեցին նրանով, որ Կարմիր Բանակի շարքերը համալրեցին իրենց զավակներով։

Ընդհանուր թշնամու՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Անգլիայի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, Գերմանիայի և իմպերիալիստական մյուս երկրների զինված ուժերի ու սպիտակգվարդիական բանդաների դեմ մղված վճռական մարտերում սովետական բոլոր զինված ուժերի ղեկավարությունը իրականացվում էր մեկ կենտրոնից՝ Մոսկվայից։

Կազմակերպվեցին ուկրաինական, բելոռուսական, լատիշական, աղրբեջանական, վրացական, հայկական և մի շարք այլ ազգային զորամասեր և միավորումներ։ Ուկրաինական բանվորներից ու գյուղացիներից կազմակերպված շատ զորամասեր ու միավորումներ թշնամու դեմ կռվում էին Սովետա-

[3] ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, Հայպետհրատ, I մաս, Երևան, 1954, էջ 527։

կան Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակի հետ կողք-կողքի։ 10-րդ բանակը, որը մեծ դեր խաղաց թշնամու դեմ մղված մարտերում, կազմված էր գերազանցապես ուկրաինացիներից։ Քաղաքացիական կռիվներում նշանավոր դեր են կատարել բելոռուսական և լատիշական ազգային զորամասերը։ 1920 թվականի գարնանը, երբ թշնամու հարձակման հետևանքով ծանր վտանգ էր ստեղծվել արևմտյան ռազմաճակատում, Ադրբեջանի Կոմպարտիայի Կենտկոմի ղեկավարությամբ Բաքվի կոմունիստներից կազմակերպվում է բանվորական գունդ, որը մեկնելով ռազմաճակատ, ակտիվ կերպով մասնակցում է թշնամու ջախջախմանը։ Այդ ժամանակ Ադրբեջանում գտնվող 11-րդ բանակի կազմում ստեղծվում է հայկական գունդ, որը հետագայում ակտիվ կերպով մասնակցում է Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարին։ Վրաստանում սովետական կարգերի հաստատման գործում ակտիվ դեր է կատարել նույն բանակի կազմում եղած վրացական դիվիզիան։ Իսկ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, այդ ռեսպուբլիկաներում Կարմիր Բանակի ազգային զորամասերի ստեղծումը ավելի լայն ծավալ է ընդունում։ Սովետական Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակի հետ միասին, ազգային այդ զորամասերը խոշոր դեր են կատարում Անդրկովկասում հակառևոլյուցիոն ուժերի ջախջախման, մեր Սովետական Հայրենիքի պաշտպանության ամրապնդման գործում։

Այսպիսով, սովետական ժողովուրդների ռազմա-քաղաքական դաշինքը հանդիսացավ այն կարևորագույն գործոններից մեկը, որը ապահովեց մեր հաղթանակը կատաղի թշնամու դեմ մղված ծանր պայքարում 1918—1921 թվականներին։ Այդ դաշինքի հաստատման և ամրապնդման, ներքին և արտաքին թշնամու դեմ հաղթանակն ապահովելու գործում առաջատար ու վճռական դեր է կատարել ռուս մեծ ժողովուրդը, որի զավակներից շատերը հերոսաբար ընկան Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի և մյուս երկրամասերի բանվորների ու գյուղացիների ազատագրման համար մղված մարտերում։

Սովետական ռեսպուբլիկաների միավորման համար ծավալված համաժողովրդական շարժման երկրորդ փուլը ընդգրկում է 1921 թ. վերջից—1922 թվականի սկիզբը ընկած ժամանակը, երբ տեղի ունեցավ այդ ռեսպուբլիկաների դիվանագիտական դաշինքը Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ։ Այդ դաշինքի շնորհիվ վճռական հակահարված տրվեց արևմուտքի իմպերիալիստներին Ջենովայի և Հաագայի կոնֆերանսներում։

Ջենովայի կոնֆերանսի բացումից երկու ամիս առաջ՝ 1922 թ. փետրվարի 23-ին Մոսկվայում կնքվում է սովետական 8 ռեսպուբլիկաների՝ Ուկրաինայի, Բելոռուսիայի, Ադրբեջանի, Հայաստանի, Վրաստանի, Խորեզմի, Բուխարայի և Հեռավոր արևելյան ռեսպուբլիկայի համաձայնությունը Սովետական Ռուսաստանի հետ, որով այդ ռեսպուբլիկաները իրենց լիազորությունները հանձնեցին Սովետական Ռուսաստանին՝ Ջենովայի կոնֆերանսում արևմտյան իմպերիալիստների դեմ հանդես գալու նաև իրենց շահերի պաշտպանությամբ։

Այսպիսով, օտարերկրյա իմպերիալիստների դիվանագիտական ճնշմանը հակահարված տալու նպատակով կնքվեց սովետական 8 անկախ ռեսպուբլիկաների հայտնի համաձայնությունը Սովետական Ռուսաստանի հետ, որը

այդ ռեսպուբլիկաների դիվանագիտական միավորման ամուր հիմքերը դրեց։ Եվ իրոք, այդ միավորման շնորհիվ Ջենովայի կոնֆերանսում սովետական դելեգացիան վճռական հակահարված տվեց Անտանտայի իմպերիալիստներին և չընդունեց նրանց պահանջները։ Իսկ ինչ էին պահանջում սովետական երկրի այդ թշնամիները։ Նրանք Սովետական իշխանությունից պահանջում էին վճարել ցարական Ռուսաստանի բոլոր պարտքերը և փոխառությունները նախկին տերերին՝ օտարերկրյա կապիտալիստներին վերադարձնել ռևոլյուցիայի հաղթանակից հետո Ռուսաստանում ազգայնացված նրանց բոլոր ձեռնարկությունները, վճարել բոլոր պատերազմական վնասները սկսած 1914 թվականից և մի շարք այլ պահանջներ։ Այդպիսի պահանջների ընդունումը պարզապես նշանակում էր Սովետական իշխանության տնտեսական կազմալուծում և կործանում։

Ուշադրության արժանի է, որ Ջենովայի կոնֆերանսում Չիչերինը որոշակի հայտարարեց Վ. Ի. Լենինի կողմից հավանության արժանացած և Ժողկոմսովետում հաստատված այն դիրքորոշումը, որ պաշտպանելով կոմունիզմի սկզբունքները, Սովետական կառավարությունը պատմական զարգացման ներկա պայմաններում հնարավոր է համարում կապիտալիստական և սոցիալիստական սիստեմների գոյակցությունը, այդ սիստեմները ներկայացնող կառավարությունների տնտեսական կապերի հրամայական անհրաժեշտությունը։

Իհարկե, իմպերիալիստները չէին կարող հանգստանալ իրենց այդ նենգ նպատակների ձախողումով Ջենովայի կոնֆերանսում։ Եվ այդ պատճառով էլ այնտեղ նրանք որոշեցին նույն թվականի հուլիսին Հաագայում հրավիրել Եվրոպական երկրների նոր կոնֆերանս, որը պետք է լուծեր Ջենովայում չլուծված հարցերը։ Սակայն իմպերիալիստների փորձերը այստեղ ևս արժանացան Սովետական Ռուսաստանի պատվիրակության ուժեղ հակահարվածին։

Ինչպես տեսնում ենք, սովետական ռեսպուբլիկաների դիվանագիտական դաշինքը վճռական դեր կատարեց իմպերիալիստների դիվանագիտական հարձակումից մեր Հայրենիքը պաշտպանելու գործում։ Այդ դաշինքը էլ ավելի մեծ դեր կատարեց հետագայում, երբ ստեղծվեց Սովետական Միությունը։

Կարևոր է նշել, որ սովետական ռեսպուբլիկաների դիվանագիտական այդ դաշինքը միանգամից չստեղծվեց։ Նա նախապատրաստվեց և անցավ զարգացման որոշ էտապներ։ Այդ դաշինքին նախորդել էին անկախ սովետական ռեսպուբլիկաների միջև 1919—1921 թթ. կնքված մի շարք պայմանագրեր։ Դեռևս 1919 թվականին Ռուսաստանի և Ուկրաինայի սովետական ռեսպուբլիկաների միջև կնքվել էր պայմանագիր նրանց դաշինքի և համագործակցության մասին, որը անկախ սովետական ռեսպուբլիկաների միջև կնքված առաջին պայմանագիրն էր։ 1920 թվականի սեպտեմբերին Սովետական Ռուսաստանը դաշնակցային պայմանագիր է կնքում Սովետական Ադրբեջանի հետ, դեկտեմբերին՝ Սովետական Հայաստանի հետ, 1921 թ. հունվարին՝ Սովետական Բելոռուսիայի հետ և այլն։

Սակայն սովետական ռեսպուբլիկաների հետագա զարգացումը և քաղաքական ու տնտեսական նոր պայմանները գործնականում ցույց տվեցին, որ դաշինքի այն ձևերը, որոնք մինչև 1922 թվականը հաստատվել էին անջատանջատ սովետական ռեսպուբլիկաների միջև, իր ժամանակին մեծագույն դեր կատարելով հանդերձ, նոր պայմաններում, երբ ամբողջ երկրում ծավալվում

էր խաղաղ տնտեսական շինարարությունը, արդեն անբավարար էին։ Այժմ անհրաժեշտ էր այդ դաշինքն էլ ավելի ծավալել, բազմակողմանի դարձնել, էլ ավելի ամրապնդել։ Անհրաժեշտ էր միավորել ժողովրդական բոլոր ուժերը սոցիալիզմի կառուցման համար, ապահովել երկրի ամուր պաշտպանությունը և ստեղծել բոլոր պայմանները սովետական ժողովուրդների բազմակողմանի զարգացման համար։ Իսկ այդ բոլորն անհնարին էին առանց նրանց միջև եղած ֆեդերատիվ կապերն ավելի զարգացնելու, առանձին սովետական ռեսպուբլիկաները մեկ միասնական, սոցիալիստական բազմազգ պետության մեջ միավորելու։

Այդ կապակցությամբ 1920 թ. հունիսին Վ. Ի. Լենինը գրել է. «...անհրաժեշտ է ձգտել ավելի և ավելի սերտ ֆեդերատիվ միության, նկատի ունենալով, առաջին՝ ամբողջ աշխարհի ռազմական տեսակետից անհամեմատ ավելի զորեղ իմպերիալիստական պետություններով շրջապատված սովետական ռեսպուբլիկաների գոյությունը պաշտպանելու անհնարինությունն առանց սովետական ռեսպուբլիկաների ամենասերտ դաշինքի. երկրորդ՝ սովետական ռեսպուբլիկաների տնտեսական սերտ դաշինքի անհրաժեշտությունը, առանց որի անիրագործելի է իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը և աշխատավորների բարեկեցության ապահովումը. երրորդ՝ միասնական, մի ընդհանուր պլանով բոլոր ազգերի պրոլետարիատի կողմից կարգավորվող համաշխարհային տնտեսության՝ որպես ամբողջության ստեղծման տենդենցը, որը միանգամայն ակնհայտորեն դրսևորվել է արդեն կապիտալիզմի օրով և անպայման ենթակա է հետագա զարգացման ու լիակատար ավարտման սոցիալիզմի օրով»[4]։

Այսպիսով, նշելով Սովետական պետության զարգացման ուղիներն ու ձևերը, Վ. Ի. Լենինը համոզիչ կերպով հիմնավորել է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության կազմակերպման անհրաժեշտությունը, որպես բազմազգ սոցիալիստական պետության զարգացման նոր, ավելի բարձր աստիճան։

Սովետական ռեսպուբլիկաների միավորման համար համաժողովրդական շարժման նոր, երրորդ փուլը սկսվում է 1922 թվականի կեսերից, որով և ավարտվում է ՍՍՌՄ-ի կազմակերպումը։ Այդ շարժումը լայն ծավալ է ընդունում Ուկրաինայում, Անդրկովկասում, Բելոռուսիայում և Ռուսաստանում։ Պարտիական ժողովներում, դեպուտատների սովետներում, աշխատավորական լայն ժողովներում քննարկվում է անկախ սովետական ռեսպուբլիկաների միավորման, միասնական սոցիալիստական պետության ստեղծման հարցը, որի հիմքում դրվելու էր այդ ռեսպուբլիկաների սուվերեն իրավահավասարությունը։ Ամենուրեք բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիան արտահայտում էին իրենց վճռական կամքը հօգուտ այդպիսի միավորման։

1922 թ. նոյեմբերին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրորդ խորհրդակցությունը լսում է Ս. Օրջոնիկիձեի զեկուցումը ՍՍՌՄ-ի կազմակերպման մասին։ Զեկուցման առթիվ միահամուռ ընդունված բանաձևում ասված է, որ խորհրդակցությունը հավանություն է տալիս ՍՍՌՄ ստեղծման դաղափարին և անհրաժեշտ է համարում, որ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը Անդրկովկասյան ֆեդերացիայի միջոցով մտնեն ՍՍՌՄ-ի

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 168։

մեջ[5]։ Նույնպիսի որոշումներ են ընդունվում նաև Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Սուխումիի, Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական), Նախիջևանի և այլ քաղաքների ու գյուղերի աշխատավորների ժողովները[6]։

Բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների անդրկովկասյան առաջին համագումարը, որը կայացավ Բաքվում 1922 թ. դեկտեմբերին, լիովին հավանություն է տալիս Սովետական Միության կազմակերպման գաղափարին և ընտրում է պատգամավորներ Սովետների Համամիութենական 1-ին՝ հիմնադիր համագումարի համար։ Այդ ժամանակ համանման որոշումներ են ընդունում նաև Ուկրաինայի Սովետների 7-րդ, Բելոռուսիայի Սովետների 4-րդ և Ռուսաստանյան Ֆեդերացիայի 10-րդ համագումարները։

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում բացվում է Սովետների Համամիութենական առաջին համագումարը, որը քննարկում և ընդունում է ՍՍՌՄ կազմակերպման մասին Դեկլարացիան ու Պայմանագիրը և ընտրում ՍՍՌՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտե։

Համագումարի պատվավոր նախագահ է ընտրվում Վ. Ի. Լենինը, որը հիվանդության պատճառով չէր մասնակցում համագումարին։

Համագումարից հետո տեղի ունեցած Կենտգործկոմի առաջին նստաշրջանը ՍՍՌՄ Կենտգործկոմի նախագահներ է ընտրում Մ. Ի. Կալինինին, Գ. Ի. Պետրովսկուն, Ա. Գ. Չերվյակովին և Ն. Ն. Նարիմանովին, իսկ Ժողկոմսովետի նախագահ՝ Վ. Ի. Լենինին։

Սովետական Միության՝ որպես բազմազգ սոցիալիստական պետության, հիմնական սկզբունքները շարադրված են այդ համագումարում ընդունված դեկլարացիայում։ Այնտեղ ընդգծված է, որ միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման շնորհիվ հնարավոր եղավ մեր երկրում լիկվիդացնել ազգային ճնշումը, ժողովուրդների միջև ստեղծել փոխադարձ վստահություն և գնել նրանց եղբայրական համագործակցության ամուր հիմքերը։ Դեկլարացիայում ասված է, որ ՍՍՌՄ-ն իրավահավասար ժողովուրդների կամավոր միություն է, յուրաքանչյուր ռեսպուբլիկայի համար ապահովված է Միությունից ազատորեն դուրս գալու իրավունքը, որ նրա մեջ կարող են մտնել ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ ապագայում կազմակերպվելիք սովետական ռեսպուբլիկաները, որ Սովետական Միությունն ամեն կերպ կնպաստի բոլոր սովետական ժողովուրդների զարգացմանը և այլն։

Պայմանագրի համաձայն այդ ժամանակ ՍՍՌՄ-ի կազմի մեջ մտան չորս ռեսպուբլիկաներ՝ Ռուսաստանի Ֆեդերացիան, Ուկրաինան, Անդրկովկասյան Ֆեդերացիան և Բելոռուսիան։ Պայմանագրում միաժամանակ շարադրված էին այն հարցերը, որոնք ենթակա էին ՍՍՌՄ-ի Գերագույն օրգանների իրավասությանը, ինչպես նաև նշված էր այդ օրգանների կառուցվածքը, Միության 1924 թվականին ընդունված առաջին կոնստիտուցիայի հիմքը։

Վերոհիշյալ Դեկլարացիան և Պայմանագիրը հանդիսացան Սովետական Միության 1924 թվականին ընդունված առաջին կոնստիտուցիայի հիմքը։

Ինչպես հայտնի է, մեր երկրում ձեռք բերված հաջողությունների հիման վրա 1936 թ. ընդունվեց ՍՍՌՄ նոր կոնստիտուցիան, իսկ այժմ, ՍՄԿՊ XXII

[5] Образование СССР, էջ 304։
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 105—109։

համագումարի որոշման հիման վրա մշակվում է սոցիալիզմից կոմունիզմի ծավալուն շինարարությանն անցնելու ժամանակաշրջանի կոնստիտուցիան, որը նշանավորելու է սովետական դեմոկրատիայի զարգացման նոր, ավելի բարձր փուլը։

Սովետական Միության կազմակերպումը իրականացվեց Կոմունիստական պարտիայի, նրա մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, անհաշտ պայքար մղելով վելիկոռուսական շովինիզմի, տեղական նացիոնալիզմի, տրոցկիստների և այլ թշնամիների դեմ, որոնք իրենց գործողություններով ամեն կերպ ձգտում էին կազմալուծել սովետական ժողովուրդների եղբայրական դաշինքը, կործանել Սովետական իշխանությունը և վերականգնել շահագործողների տիրապետությունը։

Կոմունիստական պարտիայի հետևողական աշխատանքի ու պայքարի շնորհիվ նախկինում ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների մոտ հաստատուն հիմքերի վրա դրվեց փոխադարձ վստահությունն ու հավատը ռուս մեծ ժողովրդի նկատմամբ։ Այդ վստահության անսասան հիմքերի վրա էլ ստեղծվեց Սովետական Միությունը, որը հանդիսացավ Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության ազգային քաղաքականության մի նոր, փայլուն հաղթանակ։

Այդ հաղթանակի կազմակերպիչն ու ոգեշնչողը հանդիսացել է Վ. Ի. Լենինը, որի մեծ դերը Ի. Վ. Ստալինի պաշտամունքի ժամանակաշրջանում ուղղակի թերագնահատվել էր ինչպես մեր պատմագրության մեջ, նույնպես և մյուս բնագավառներում։

Ինչպես նշեցինք քիչ առաջ, Կ. Մարքսից և Ֆ. Էնգելսից հետո Վ. Ի. Լենինը, ի թիվս մարքսիզմի մյուս գլխավոր հարցերի, նոր պայմանների համապատասխան մշակել ու զարգացման նոր աստիճանի է հասցրել նաև ազգային հարցը։

Եթե տվյալ դեպքում նկատի առնենք սոցիալիստական բազմազգ պետություն ստեղծելու հարցը, ապա ակնհայտ է, որ այս հարցի և՛ թեորիական բազմակողմանի հիմնավորողը և՛ այն կյանքում կենսագործելու կազմակերպիչն ու ոգեշնչողը հանդիսացել է Վ. Ի. Լենինը։ Դեռևս սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից առաջ Վ. Ի. Լենինը ցույց է տվել, որ կոմունիստները պայքարում են ազգությունների այնպիսի կամավոր միավորման համար, որի պայմաններում կտրականապես բացառվելու է ազգերին միմյանց դեմ դրգռելը և լիակատար կամավորության ու իրավահավասարության հիման վրա հաստատվելու է իսկական եղբայրական դաշինք։ Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին Վ. Ի. Լենինը բազմիցս առաջ է քաշել դաշնակցային սովետական պետություն ստեղծելու հարցը, որի կոնկրետ արտահայտությունը հանդիսացավ Ռուսաստանյան ֆեդերացիայի կազմակերպումը։

Բնորոշելով այդ առաջին բազմազգ սոցիալիստական պետության էությունը և ցույց տալով նրա արմատական տարբերությունը բուրժուական ֆեդերացիայից, Վ. Ի. Լենինը 1918 թ. հունվարին ասել է. «Մենք իշխում ենք թե բաժանելով, ըստ հին Հռոմի պաժան օրենքի, այլ միացնելով բոլոր աշխատավորներին կենդանի շահերի, դասակարգային գիտակցության անխախտելի շղթաներով։ Եվ մեր միությունը, մեր նոր պետությունը ավելի ամրակուռ է, քան բոնապատական իշխանությունը, որը սրով ու երկաթով միավորում է

իմպերիալիստների համար հարկավոր արհեստական պետական կազմավորումներ»[7]։

1919 թ. հուլիսին գրած «Մեծ նախաձեռնություն» հոդվածում, ուր վերլուծում է բանվորների հերոսական աշխատանքը թիկունքում, Վ. Ի. Լենինը նշել է, որ կոմունիզմի համար, նոր կյանքի կառուցման համար աշխատավորները «...սկզբում միավորվում են մեկ սոցիալիստական պետության մեջ, հետո Սովետական ռեսպուբլիկաների Միության մեջ»[8]։

Նույն միտքը ավելի ընդարձակ կերպով Վ. Ի. Լենինն արտահայտել է 1919 թ. դեկտեմբերին Դենիկինի դեմ հաղթանակի առթիվ Ուկրաինայի բանվորներին և գյուղացիներին ուղղված նամակում, ուր ասված է. «Մենք ազգերի կամավոր միություն ենք ուզում, այնպիսի միություն, որը ոչ մի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմնված լիներ ամենալրիվ վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա»[9]։

Ապատ սովետական ռեսպուբլիկաներից միութենական պետություն ստեղծելու գաղափարը ավելի ընդգծված կերպով Վ. Ի. Լենինը առաջադրել է 1920 թ. հունիսին՝ «Ազգային և գաղութային հարցի վերաբերյալ թեզիսների սկզբնական ուրվագծում»։ Նրա այդ միտքը մեր կողմից բերվեց վերևում։ Ինչպես տեսանք, Վ. Ի. Լենինը այնտեղ ընդգծել է, որ «...անհրաժեշտ է ձգտել ավելի և ավելի սերտ ֆեդերատիվ միության...»[10]։

Դնելով սովետական ռեսպուբլիկաների պետական միավորման, նրանց ֆեդերացիայի ստեղծման հարցը, Վ. Ի. Լենինը նշել է, որ այդ ֆեդերացիան իր սկզբունքներով ու նպատակներով ֆեդերատիվ պետության նոր ձև է լինելու, որը ոչ մի առնչություն չունի բուրժուական ֆեդերացիայի հետ։

Վ. Ի. Լենինի կողմից նոր, սովետական ֆեդերացիայի պետական ձևի հայտնագործումը սովետական ժողովուրդներին հնարավորություն տվեց իրավահավասարության, բարեկամության և եղբայրության հիման վրա համախմբվելու իրենց բազմազգ պետության՝ Սովետական Միության մեջ։

Ինչպես հայտնի է, հիվանդության պատճառով Վ. Ի. Լենինը ի վիճակի չեղավ մասնակցելու Կենտկոմի հանձնաժողովի աշխատանքներին (որին հանձնարարված էր նախապատրաստել ՍՍՌՄ-ի կազմակերպումը)։ Նա չկարողացավ մասնակցել նաև Սովետների Համամիութենական առաջին համագումարին, որտեղ ձևավորվեց Սովետական Միությունը։

Եվ չնայած դրան, հիվանդ վիճակում նա ուշադիր կերպով հետևում էր Սովետական Միության կազմակերպման աշխատանքներին և անմիջականորեն ղեկավարում այն։

Կենտկոմի վերոհիշյալ հանձնաժողովը 1922 թ. սեպտեմբերին ընդունել էր Ի. Վ. Ստալինի կազմած «Անկախ ռեսպուբլիկաների հետ ՌՍՖՍՌ փոխհարաբերությունների վերաբերյալ բանաձևի նախագիծը», ըստ որի ազգային սովետական ռեսպուբլիկաները Ռուսաստանյան ֆեդերացիայի մեջ պետք է մտնեին ավտոնոմիայի սկզբունքով։ Մանրթանալով այդ նախագծին, նույն ամսի 27-ին Կենտկոմի Քաղբյուրոյի անդամներին հասցեագրված նամակում

7 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 585։
8 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 524։
9 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 368։
10 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 168։

Վ. Ի. Լենինը խիստ քննադատում է այդ նախագիծը, որը ըստ էության անտեսում էր ազգերի իրավահավասարությունը։ «...Մենք,— գրում էր Վ. Ի. Լենինը,— մեկ իրավահավասար ենք ճանաչում Ուկրաինական ՍՍՌ-ի ու մյուսների հետ և նրանց հետ մեկտեղ ու նրանց հետ հավասարապես մտնում ենք նոր միության, նոր ֆեդերացիայի մեջ...»[11]։ Դրանով իսկ Վ. Ի. Լենինն առաջարկեց հարցի սկզբունքային այլ լուծում՝ ոչ թե ավտոնոմիայի հիման վրա ազգային ռեսպուբլիկաների ընդունում Ռուսաստանյան ֆեդերացիայի կազմի մեջ, այլ լիակատար իրավահավասարության հիմունքներով բոլոր սովետական ռեսպուբլիկաների, այդ թվում և Ռուսաստանյան ֆեդերացիայի կամավոր միավորումը պետական մի նոր կազմակերպության՝ Սովետական Ռեսպուբլիկաների Միության մեջ[12]։ Լենինյան այդ ցուցումների հիման վրա Կենտկոմի հանձնաժողովը անհրաժեշտ ուղղումներ կատարեց վերոհիշյալ բանաձևի նախագծում, որից հետո այն հաստատվեց Կենտկոմի Հոկտեմբերյան պլենումի կողմից։

Սովետների Համամիութենական առաջին համագումարի բացման և նրա հաջորդ օրը՝ 1922 թ. դեկտեմբերի 30-ին և 31-ին Վ. Ի. Լենինը թելադրեց «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակը։ Այդ նամակում տալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի խորը վերլուծությունը, նա հատուկ կերպով ընդգծեց, որ անհրաժեշտ է խստիվ պահպանել պարտիայի ծրագրում առաջադրված ազգային հարցի սկզբունքները։ Այստեղ ևս քննադատելով «ավտոնոմիզացիայի» սխալ գաղափարը, Վ. Ի. Լենինը սովետական ռեսպուբլիկաների պետական միավորման միակ ճիշտ ձևը համարեց ազգային սովետական ռեսպուբլիկաների սուվերեն իրավահավասարության հիման վրա ստեղծված պետական միությունը, որը և կազմակերպվեց այդ օրերին։

Ամփոփելով մեր ասածները Սովետական Միության կազմակերպման մասին, հարկ ենք համարում ընդգծել, որ այն տեղի ունեցավ Կոմունիստական պարտիայի և նրա մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի անմիջական գլխավորությամբ, հանդիսանալով պարտիայի ազգային քաղաքականության մի նոր հաղթանակը։ Սովետական Միության՝ որպես բազմազգ սովետական պետության, կազմակերպման ընթացքում կրկին անգամ փայլուն կերպով դրսևորվեց մեծ Լենինի հանճարը որպես մեծ տեսաբանի և կազմակերպիչի։

* * *

Անցած 40 տարիների ընթացքում Սովետական Միությունը մեծ չափով աճել է, հզորացել։ Եթե կազմակերպման ժամանակ նրա մեջ կային չորս ռեսպուբլիկա, ապա ներկայումս դրանց թիվը հասել է 15-ի։

Մեր երկրում լիովին և վերջնականապես հաղթանակել է սոցիալիզմը և այժմ սովետական ժողովուրդը ձեռնամուխ է եղել կոմունիզմի ծավալուն շինարարությանը, որի ճանապարհին խոշոր առաջընթաց քայլ է հանդիսանում յոթնամյա պլանը։

Սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի շնորհիվ այդ վիթխարի պլանը հաջողությամբ իրագործվում է։ Արդեն ավարտվում է յոթնամյակի

---

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 36, էջ 553։

12 Տե՛ս նույն տեղում։

չորրորդ տարին։ Ինչպես ցույց է տրված Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 45-րդ տարեդարձի առթիվ ընկ. Ա. Ն. Կոսիգինի զեկուցման մեջ, չորս տարվա ընթացքում Սովետական Միության արդյունաբերությունը 28 միլիարդ ռուբլով ավելի արտադրանք է տվել, քան նախատեսված է եղել այդ տարիների համար։ Նույն ժամանակամիջոցում արտադրվել է 13 միլիոն տոննա ավելի պողպատ։ Բերված թվերը ցույց են տալիս, որ մեծ հաջողությամբ իրագործվում է պարտիայի նշած ծրագիրը արդյունաբերության զարգացման մասին։

Եթե ցարական Ռուսաստանի արդյունաբերության արտադրանքը 1913 թ. կազմում էր համաշխարհային արտադրության 4 տոկոսը, ապա այժմ Սովետական Միության արդյունաբերության արտադրանքը կազմում է համաշխարհային արտադրանքի 20 տոկոսը, այսինքն գրեթե այնքան, որքան արտադրում են Անգլիան, Գերմանիայի Ֆեդերատիվ ռեսպուբլիկան և Ֆրանսիան միասին վերցրած։

Պարտիայի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ նոր հաջողություններ է հասել մեր սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Այդ են ապացուցում հետևյալ թվերը։ 1955 թվականից մինչև 1962 թվականը երկրում գյուղատնտեսության արտադրանքը աճել է 1,6 անգամ, բայց չնայած դրան, գյուղատնտեսության այժմյան մակարդակը մեզ չի կարող բավարարել։ Ահա թե ինչու պարտիան շարունակում է խոշոր ուշադրություն դարձնել գյուղատնտեսության հետագա զարգացման վրա։

Փայլուն հաջողությունների են հասել սովետական գիտությունը և կուլտուրան։

Այդ հաջողությունների ընդհանուր ֆոնի վրա է՛լ ավելի մեծ են ազգային սովետական ռեսպուբլիկաների հաջողությունները։

Ինչպես հայտնի է, ցարիզմը դաղութների և կիսագաղութների էր վերածել Ռուսաստանի ազգային շրջանները և ծայրամասերը։ Եվ նրա դաղութային քաղաքականության հետևանքով այդ շրջանները տնտեսական ու կուլտուրական զարգացման տեսակետից բավականաչափ ետ էին մնացել առանց այն էլ դարական Ռուսաստանի թույլ զարգացած կենտրոնական շրջաններից։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը ազատություն բերեց ազգային շրջաններին ու ծայրամասերին։ Ստեղծվեցին ազգային սովետական ռեսպուբլիկաներ, որոնց գոյության առաջին իսկ շրջանից Սովետական Ռուսաստանը եղբայրական և բազմապիսի անշահախնդիր օգնություն ցույց տվեց նրանց, փոխադարձաբար ստանալով վերջիններիս օգնությունը։ Իսկ երբ կազմակերպվեց Սովետական Միությունը, տեղի ունեցավ սովետական ռեսպուբլիկաների բոլոր ուժերի ու հնարավորությունների միացում՝ հանուն սոցիալիստական շինարարության ծավալման։ Դրանով իսկ զարգացման նոր աստիճանի հասավ իրավահավասար սովետական ռեսպուբլիկաների եղբայրությունը և փոխադարձ օգնությունը։

Կոմունիստական պարտիան իր առաջնահերթ խնդիրը համարեց մեր սոցիալիստական տնտեսության ընդհանուր զարգացմանը զուգընթաց, ավելի արագ տեմպերով զարգացնել ազգային սովետական ռեսպուբլիկաների էկոնոմիկան և կուլտուրան, այն հաշվով, որպեսզի դրանք կարճ ժամանակամիջոցում իրենց զարգացման մակարդակով հասնեն Ռուսաստանի կենտրոնական շրջաններին։ Եվ պատմական կարճ ժամանակամիջոցում լենինյան ազգային այդ քաղաքականությունը տվեց իր փայլուն արդյունքները։ Ազգային

ռեսպուբլիկաներում լայն ծավալ ընդունեց ինդուստրիալ շինարարությունը, առաջացան արդյունաբերական նորանոր շրջաններ, սկսեց արագ թափով աճել և զարգանալ բանվոր դասակարգը։ Ամուր հիմքերի վրա դրվեց սոցիալիստական գյուղատնտեսության տեխնիկական զինվածությունը։

Ինչպես հայտնի է, ՍՄԿՊ XX համագումարը որոշում ընդունեց ավելի ընդարձակել ազգային ռեսպուբլիկաների իրավունքները։ Այդ որոշման կենսագործումը խոշոր չափով նպաստեց ազգային ռեսպուբլիկաներում նոր հաջողություններ ձեռք բերելու գործին։

Դրա շնորհիվ ազգային ռեսպուբլիկաների արդյունաբերության և ամբողջ էկոնոմիկայի զարգացումը ավելի արագ տեմպերով է ընթացել պարտիայի XX համագումարից հետո ընկած շրջանում, հատկապես յոթնամյակի անցած տարիներին։

Հսկայական է Սովետական Միության պատմական նշանակությունը ոչ միայն մեր երկրի համար, այլև միջազգային առումով։

Մեր սովետական բազմազգ պետությունը հաստատեց ազգամիջյան հարաբերությունների նոր, պատմության մեջ մինչև այդ չտեսնված ձև, որի հիմքը հանդիսանում է պրոլետարական ինտերնացիոնալիզմը և սոցիալիստական հայրենասիրությունը։ Սովետական բոլոր ռեսպուբլիկաների պետական միավորման, նրանց ուժերի համախմբման, փոխադարձ վստահության և եղբայրական օգնության շնորհիվ մեր երկրում վաղուց վերացված է ազգերի փաստական անհավասարությունը, առաջացել են նոր, սոցիալիստական ազգեր, որոնք գտնվում են իրենց նյութական և հոգեկան ուժերի աննախընթաց ծաղկման շրջանում։ Ազգերի միջև փաստական անհավասարության վերացումը միաժամանակ վճռական հակահարված է ռասիստական և այլ հակագիտական թեորիաներին, որոնք ժողովուրդներին բաժանում են «լիարժեք» և «ոչ լիարժեք» կատեգորիաների։ Սովետական բազմազգ պետության հսկայական կենսական ուժը փայլուն կերպով դրսևորվեց Հայրենական Մեծ պատերազմի տարիներին։ Սովետական ժողովուրդների անխախտ բարեկամությունը և վառ հայրենասիրությունը հանդիսացավ ֆաշիզմի դեմ մեր պատմական հաղթանակի կարևորագույն աղբյուրներից մեկը։

«Մեր պարտիային,— ասում է ընկ. Ն. Ս. Խրուշչովը,— հենց այն պատճառով հաջողվեց վերացնել ցարական Ռուսաստանում ժողովուրդների միջև գոյություն ունեցած փոխադարձ անվստահությունը, Սովետական Միության բոլոր ժողովուրդներին միավորել եղբայրական բարեկամության կապերով, որ նա միշտ խոր ուշադրություն է ցուցաբերել այդ ժողովուրդների շահերի նկատմամբ, նրանց ազգային առանձնահատկությունների և իրձերի նկատմամբ, դա զուգորդելով բոլոր ազգությունների աշխատավորներին սոցիալիստական ընդհանրության ոգով, համապետական շահերի նկատմամբ հոգատարության ոգով դաստիարակելու հետ»[3]։

Մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ տեսության և Սովետական Միության հարուստ փորձի հիման վրա սոցիալիստական լագերի երկրները հաջողությամբ առաջ են տանում սոցիալիստական շինարարությունը, որի հիմքում ընկած է այդ երկրներում ազգային հարցի ճիշտ լուծումը և ազգերի բարեկա-

[3] Ն. Ս. Խրուշչով, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի 20-րդ համագումարին, Երևան, Հայպետհրատ, 1956, էջ 131։

մությունն ու համագործակցությունը։ Սոցիալիստական լագերի բոլոր երկրների ընդհանուր նպատակը՝ սոցիալիզմի և կոմունիզմի կառուցումը այդ երկրներին համախմբել է ամուր տնտեսական, քաղաքական և ռազմական համագործակցության մեջ, որի անսասան հիմքն է հանդիսանում պրոլետարական ինտերնացիոնալիզմը, փոխադարձ վստահությունը, իրավահավասարությունը և փոխադարձ օգնությունը։

Սովետական Միության և ամբողջ սոցիալիստական լագերի ազատ ազգերի ու ժողովուրդների եղբայրական համագործակցությունը և նրա հիման վրա ձեռք բերած խոշոր հաջողությունները անսահման ուրախություն են պատճառում մեր բարեկամներին ու եղբայրներին գաղութային երկրներում և կապիտալիստական աշխարհում։ Այդ հաջողությունները նույնքան էլ ցավ են պատճառում ու անհանգստացնում մեր թշնամիներին, որոնք նենգաբար կեղծելով պատմական իրականությունը, ամեն կերպ փորձում են ժխտել կամ վատաբանել սոցիալիստական լագերի հաջողությունները։

Սակայն կապիտալիզմի դեմ պայքարի դուրս եկած ժողովուրդները և՛ մետրոպոլիաներում, և՛ գաղութային երկրներում, և՛ գաղութային կապանքներից ազատագրված երկրներում մեծ հավատով են վերաբերվում Սովետական Միության և ամբողջ սոցիալիստական լագերի ազգերի եղբայրական համագործակցությանն ու նրանց ձեռք բերած խոշոր հաջողություններին։

Սովետական Միության բոլոր սոցիալիստական ազգերի ու ժողովուրդների համար զարգացման նոր, ավելի փայլուն հեռանկարներ են բացվում կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում։ Այդ մասին Կոմունիստական պարտիայի նոր Ծրագրում ասված է.—

«Կոմունիստական ծավալուն շինարարությունը ՍՍՌՄ-ում ազգային հարաբերությունների զարգացման նոր էտապ է նշանավորում, որը բնութագրվում է ազգերի հետագա մերձեցման և նրանց լիակատար միասնության իրագործմամբ»[14]։ Այդ նպատակով ծրագրում նախատեսված են հետևյալ միջոցառումները.

ա) շարունակել բոլոր սովետական ազգերի և ազգությունների էկոնոմիկայի և կուլտուրայի համակողմանի զարգացումը.

բ) տնտեսական ասպարեզում այսուհետև ևս վարել սովետական ռեսպուբլիկաների տնտեսության համակողմանի զարգացման գիծ.

գ) հասնել ՍՍՌՄ ժողովուրդների բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային կուլտուրայի հետագա բազմակողմանի ծաղկմանը.

դ) հետագայում ևս ապահովել ՍՍՌՄ ժողովուրդների լեզուների ազատ զարգացումը.

ե) այսուհետև ևս հետևողականորեն կիրառել ինտերնացիոնալիզմի սկզբունքները ազգային հարաբերությունների ասպարեզում[15]։

Ինակոխելով իր գոյության 5-րդ տասնամյակը, Սովետական Միությունը հաջողությամբ իրականացնում է պարտիայի Ծրագրի այդ պահանջները։

Մեր մեծ Հայրենիքի բոլոր սոցիալիստական ազգերն ու ժողովուրդները հերոսական աշխատանք են ծավալում այդ խնդիրների և ՍՄԿՊ XXII համագումարի պատմական որոշումների կենսագործման համար, յուրաքանչյուրը իր լուման մտցնելով կոմունիզմի կառուցման մեծ գործում։

[14] Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը, էջ 135։

[15] Տե՛ս Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Ծրագիրը, էջ 136—139։